

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ԱՅՎԱԶԵԱՆ ՅՈՎՔԱՆՆԵՍ ԾՈՎԱՆԿԱՐԻՉ

ՅԻՇԱՏԱԿԱՒ

ՅԻՄՆԱՄԻՒՅՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵՈՒ

(Համեմատ 1898ի Բազմավիպելի)

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԻՒԹՈՒԹԵԱՆ ՏՊԱԳՐՈՒ

ՎԵՆԵՏԻԿ — Ա. Գ. Ա. Ր. Ա. Ր.


1922

754

Ա-552

EDS. 30. 11
13 APR 2011

18
16




11.06.2013

2729

754

U-552

<41



ԱՊՎԱԶԵԱՆ Ա.ՑԱԶԵԱՆ



69613 - 68

ԱՅՎԱԶԵԱՆ ՅՈՎՔՅԱՆՆԵՍ ԾՈՎԱՆԿԱՐԻԴ

Ց Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ի

ՅԻՍՆԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ԱՅ հանճարն հրաշք կը գործէ։ Սակաւ կ'երեւի նա հրապարակի վրայ, ստոյգ է այդ, բայց փառօք. և կ'երեւի հաւասարապէս մամլոյ ներքեւ, վրձնոյ տակ, թափերաբեմի վերայ, արքայական աթոռոց շուրջ, և ամենայն ուրեք։ Հայ հանճարն անմահ է. հարուածք և կտանք, հուր և մուրճ չեն եղծաներ ոսկոյն դեղը, այլ մանաւանդ աւելի կը պայծառացնեն։ Տառապեալ ազգ, եղկելի՞ ժողովուրդ, որ քո յետին թշուառութեանդ մէջ անգամ՝ տաղանդով և զօրութեամբ յօրացելոց աչերը կը խոնարհեցնեն. պէտք չէր որ լքուած լինէիր գու յերկնից։

Այլազեանն, ահա այն անունն՝ որ իւր պարզութեան մէջ ամբողջ մեծութիւնն է, վեհութիւնն է հայ հանճարոյն գեղարուեստից մի մասին մէջ. այն անունն՝ որ լցած է բովանդակ Ռուսաստանը, բովանդակ նկարչական աշխարհը և կը սրանչանայ և կը պատկառի Եւրոպէ այդ արուեստագիտէն. կը սրանչանայ և կը հապատականայ հայն իւր այդ զաւակով։

Մտօքս կը թռչիմ դէպ ի թռն և բոհ երկրագնդոյս, կը տեսնեմ աջ մի, որ կը սրանայ բարձրէն ի վայր՝ կ'առնու լեռնանման պղտոր հեղեղները՝ կը նետէ անյատակ վհերու մէջ թաւալեցնելով խորեքն յափունոյ յափանց ի խորս. կը նետէ սահմանաւոր փոսերու մէջ, իւր չնչով թեթեւակի ճօնելով զանոնք. կը նետէ ապալեր ժայռից վերայ, սաստիկ դղրդմամբ տապալելով ի վայր և փրփրալից ցիր և ցան։ Ալուծին արարիչն է դա ջրոց։ — կը տեսնեմ և ուրիշ աջ մի յեզր նոյն ժիրոր շարժուն լերանց, նոյն լոյծ ապակոյ, և յուս նոյն գահավէժ սահմանաց, որ կ'առնու կ'ամփոփէ զանոնք համանման երանգօք՝ համանման դեղով մի փոքր կտաւի մէջ։ Դա Այլազեանն է, երկրորդ արարիչը ջրոց, եթէ կարելի է այսպէս ըսել։ Մեծ է առաջինն այդ տարեր ստեղծման մէջ, մեծ է երկրորդն անոր գաղտնիքը խորապէս ըմբռնելու և դուրս բերելու մէջ իւր բոլոր երեւոյթներով։ Նկարել զայդ քանի մի հազար անգամ, և մին միւսէն տարբեր, և ըսել՝ որ « եթէ երեք հարիւր տարի եւս ապրիմ» միշտ նոր բան պիտի տիսնեմ շինելու », մի թէ արարչագործ մտաց անսահմանութիւնը չի յիշեցներ, կամ անոր մասնակցութիւն մի չի՞ ցուցներ։

Լոնիք արուեստին տեղեկաց գատաստանը : Ուուս բանիբուն քննադատք քանից վկայեցին՝ թէ նկարչութեան պյու ճիւղին մէջ Այլազենին հաւասար ոչ ոք կայ ամբողջ Եւրոպէի մէջ : Եւ հոչակաւորն Որատ Վեռնէ նորա գծագրածները տեսնելով, իւր հայրենակցին Գիւղինի՝ գաղիցոց Այլազենին համար ըսաւ՝ թէ « այսպիսի բան մի իւր բոլոր կենաց մէջ եւ ոչ իսկ մտածեր է » : Այս բանիս լուր և մանաւանդ բան զայլս պերճախօս վկայ մ'է և այն հանգամանքն, որ մեր ծովանկարչին գործերը զարդարած են որմերն արգունեաց Ռուսիոյ՝ երեք կայսերաց օրով, Գալիոյ՝ Գ Նապոլէոնի, Բիլցանդիոնի՝ երկու սուլտանաց ժամանակ, հանդերձ չերմ զովեստիք նոյն վեհապետաց ի լուր հեղինակին, և որմերը ճեմարանաց Պետրոսիք՝ որոյ ուսուցչութեան պատոյն բարձրացած է դեռ շատ կանուխ՝ 1847ին, և Պարիսի և Ամստերդամիք՝ որոց կանառորդ է յիսուն տարիներէ հետէ : Իսկ իւր կործքը կը պճնեն մեծամեծ շքանշանք և դարանը պերճ շքադրամք նոյն արբայից և կանառաց :

Ցընթացս իւր ութնամեայ կենաց կազմած է նա հարիւր քսան պատկերանդէս, յորոց երկուքն ի Պարիս և երկուքն ի Վենետիա : Երեք տարի յառաջ այս վերջին քաղաքէս անցնելուս՝ այցելելով Պիտեան հոչակաւոր ապարանքը և առնթեր գեղարուեստական սրահները, ասոնց միոյն մէջ՝ ի կարգի աշխարհիս հոյակապ նկարչաց ինքնագործ կենդանագրացն յանկարծակի տեսայ Այլազենին այլ, ցնցուեցայ և յուզեցայ այս անակնկալ հանդիպմանէս՝ մուծելով . « հայ մի իտալիոյ և աշխարհի մեծանուն դիմաց մէջ » : Քաղաքին նեմարանը խնդրած էր զայն իւրմէ :

Մեծ ծերունոյն գործերը չեն համարուիր, և կը տարակուսիմ թէ ինքն իսկ նեղինակը գիտնայ անոնց թիւը : Աշխարհիս ամենէն հեռաւոր և անծանօթ անկեանց մէջ անգամ հասած են անոնք : Կը ցաւիմ որ հազիւ զոմանս եմ տեսած անոնցմէ . թէ և այս հանգամանքն ունեցած է յիս իւր օգտակար արդիւնքը՝ զայնս որոշ որոշ պահնելու մոտացու մէջ : Ո՞վ կը սպասէր՝ ի Հոռոմ անշուք տան մի մէջ՝ տեսնել նորա մի նկարը, ներկայացնելով զերկիր ի սկզբան իւր ստեղծման : Ո՞հա անոր համառօտ նկարագիրը : Գիշեր մ'է, յաւերժական գիշերը, « խաւար անդընդոց վերայ », որ համատարած ծովը և վայրահակ թիսաթոյը ամպերը կը պատէ խառն ի խուռն իրարու մէջ . « երկիրն աներեւոյթ և անպատրաստ էր » : Զրերը կը ծածանին ոչ սաստիկ : Սի անծանօթ կենդրոնէ թեթեւ լոյս մի՝ կը ցոլանայ ամպոց մէջ . և տեղ մէ՝ կարծես այդ անյայտ կենդրոնն համարուած տեղուոյն մէջ՝ կ'երեւի դէմք մի ի շարժման, կ'երեւի և չերեւի . նուրբ աչք պէտք է՝ որ կարենայ նշամարել « հոգին Աստուծոյ՝ որ կը շրջի ցրոց վերայ » : — Թողլով զայս՝ դառնամք նկատել արարչին և մարգկան ճարտարութեամբ յարդարեալ երկիրը :

Տեսած էք հէպուլոյ փարուսը . թերեւս, բայց ոչ Այլազենին անոր զգեացուցած կերպարանաց մէջ : Յառաջացած երեկոյ մ'է . — ոչ ապաքէն փարոսը զիշերի զարդն է — : Կապուտակ ծովը կը ծփի . յայն կոյս դաժան Վեռուով կանած մեկուսի՝ իւր բոցավառ շրթներէն կը ժայթքէ ամբաւ թանձրութիւն մի ծխոյ, որ կ'ելնէ բարդ ի բարդ կը պատէ երկիրնքը . և լուսինն անոնց վառ ի վառ ճեղքերէն անցունելով իւր գեղին լոյսն՝ առանց ինքնին երեւելու, ուրեք ուրեք կ'ոսւ կեզօծէ տատանող կոհակաց մկանունքը : Այդ նառազայթից անդրադարձ ցոլաց :

1. Այս վանաց թանգարանի մէջ եւս՝ ի կարգի համաշխարհի հոչակաւոր անձանց զաճեալ բարձրաբանդակ դիմաց, կը փայլի Այլազենը, վկայ միաբանութեանս առ ինցն ունեցած առանձին մեծարանաց :

մամբ կը նշմարուի մերձաւոր նաւ մի, որ գիմէ զայ գէպ ի հոկայ փարոսը, որ այնչափ շարժմանց մէջ ինք միայն անշարժ, կարմիր աքրով կը դիտէ անդունդները, առ ինքն կոչելով տագնապած ճանապարհորդները և հովանաւորելով . իւր սուրուած հաւաքուած առագաստաւորաց : Նիւթոյն հաւասար հրաշալի է հոս և գունոց խառնուրդը . իւրաքանչչւրն այդ իրերէն և տարրերէն օրուան այդ ժամուն, այդպիսի հանգամանաց մէջ՝ ուրիշ գիշին կարող առնուլ :

Ահա երրորդ մ'այլ, կոստանդնուպոլուսոյ մուտք լուսնակ գիշերով : Դարձեալ զիշեր՝ ինչո՞ւ մեր լեզուի մէջ չկան ուրիշ և զանազան անուանն՝ սեպհականնելու Այլազենին ստեղծած զիշերաց, որք բնաւ չեն կրնար նոյն բառի բացարուիլ : Բոսպորի այդ պահը մոռանալ կու տայ ո և է զեղեցիկ տիւ մասաղ բնութեան : Սա պարզութիւնն օդոյ, ի թիկանց բլոց զեռ նոր բարձրացած արծաթեայ բոլորակ ափսէն՝ ամպի նուրբ շիրտի մի ետեւ, որով կարծես մի թափանցիկ երիզով ազուրուած լինի երկնակամարին վրայ, անոր ոսկի շողից ճապաղումն մեզմիկ սիւրին հետ ջրոց մանրիկ խաղերուն երեսը, զբասախրաց կէս մի ընդ լուսնով և կէս մի ստուերի մէջ շողացող նաւակաց հրապոյրը, մեծազանգ նաւաց անշարժ և ոմանց գնայուն տեսիլն ասոտ անդ, այդ բոլորը կը յափշտակէն աչքով և միտքով . կը խոյանաս անդադար ծովէն ի լուսին, լուսնէն ի ծով :

Նման է ագոր՝ և շատ աննման՝ տեսած միւս զիշերս : Երկնակամարը ծածկուած է մութ և հանդարտ ամպերով, որոց մի բոլորչի բացուածի միշէն կը նայի լուսինն, ընծայելով մի բարձր աշտարակի պատուանի մէջ կախուած ելեկուրական լաշտուրի մի կախարդէն երեսոյթը : Իւր տարտամ լոյսը կը բանայ դիմացդ, հորիզոնը և անոր վերայ սահնի մի փոքրկացած առագաստները, մօտակայ անշարժ եռակայմը և թիավարեալ մակոյկ մի, և քաղաքի մի մասն կողմանկի : Հոս նկարին փոքրկութիւնը չի արգելուր ճարտար նկարչին՝ ամփոփել իւր մէջ մեծ ընդարձակութիւն մի տեսարանի՝ համեմատական հեռաւորութեամբ իրաց, որք մի ակնարկով միանգամայն երեւելով՝ ի միասին կը ներգործեն դիտողին վրայ : Երկու հակառակ զգացումներ կը կոռուին քո մէջ . երկնից եկամուռ ամպելէն առաստաղը կը ճնշէ սիրտդ, և ծիծագու ծովը կը դիմացէ . և վերջապէս կը գաւմուի կը մնաս հոդ :

Փոխեմք օրուան պահն և տարւոյն եղանակը . ուղիեմք մեր աչեր ծովեզրի մի վերայ, ուր կ'իշխն տիւ և ձմեռն : Անհանդարտ ծովէն խաւ խաւ փրփուրք կու զան կը մարին ձիւնեղին սաւանով ծածկուած ափանց վերայ, իրենց հետ բերելով յանձնելով ձկնորսաց ոմանց ձեռքը՝ թափառիկ արկեր, տակառներն և այլ նիւթեր նաւարեկելուց : Կոցանէ ոչ շատ հետի կը սահն մին մաս մի վայելչապէս ծոած մի կողին վերայ, ցոյց տալով իւր լայնութիւնը . աւելի հետի՝ ամպածեւ մառախոյ մէջ կը ճնճին ուրիշ երկուք եւս : Կ'ախորժիս տեսարանին զեղեցկութիւնն . բայց եղանակին կծու ազգեցութիւնը կը ստիպէ զքեզ խոյս տալ՝ եթէ ամառնային զգեստով ես : Արուեստն և բնութիւնն կատարելապէս միաբանած են հոս :

Անգամ մ'այլ գտանսմք ցամաքը՝ նայել նուիրական Մասեաց : Վ'սեմ լերինք գոեմ՝ գրչի հանդիպած : Ամորոտի այս գալար դաշտավայրք Այլազենին ծովու նախանդը կը շարժեն . կը զգուշես բնութեան հիւսած անզուգական գորգը : Միգի լայն սպիտակ կէս թափանցիկ ժապաւէն մի կը սրոց ոտներն հոկայ զուրին՝ հանդերձ երկու հեռաւոր փոքր պուրակօք : Եւ ահազին՝ այլ զեղեցիկ զանգուածները կապուտակ կողերով՝ ալեւոր զլխովք կ'ելնեն կը բարձրանան, փոքրը վերջանալով օդոյ մի գորշ խաւի մէջ, և մեծը սուզուելով երկնից կապուտակին մէջ : Կենդանի և մեռեալ բնութեանց զուգադրութիւնն ի կատար

Երանց և դաշտաց վերայ սքանչելի է՛ Զես կարծեր գքեղ նկարի առջեւ, այլ նոյն ինքն իրականութեան. ալեւոր Մասեաց հերաց փայլուն սպիտակութիւնը կը շացնէ աչերդ. մարզաց գարնանային կենդանարար շունչը կ'ուռեցնէ կուրծքդ:

Չեմ ուզեր աւելի խօսել այսպիսեաց վերայ. այլ բաւական կը համարիմ ըսեւ՝ թէ Այլվագենին ընտրած նիւթերը սովորաբար այսպիսի վայրկեաններ են, զորս բնութիւնն ազանութեամբ կը չնորհէ ամենուն՝ բաց ի մեր նկարչէն, հասողութով՝ թէ գիտէ նա իւր արծուի խորաթափանց աչերէն մազ մ'իս չըլրիպեցնել իւր իսկութենչն և ի չնորհաց: — Թողով գործերն՝ յառաջ տանիմք մ'ի խօսքը գործչին վերայ:

Այլվագեան՝ ինչպէս ըսի՞ այսօր ութուն ձմերանց հետքերը կը կրէ իւր գլխոյն վերայ: Անցեալ սեպտեմբերին տօնեց նա իւր վաթնամեայ ժիր գործունէութիւնին յիշատակը. բոլոր Ռուսաստան արքունիք հանդերձ՝ և արտաքինք եւս՝ մասնակցեցան այդ հանդիսին: Միթիթարեան միաբանութիւնս այլ յայտնեց ծերունոյն իւր ինդակցութիւնն ի ձեռն հեռագի և ներկայացուցչի: Ահա ինչ որ գրէ նոյն ներկայացուցչն, մեր միաբան Հ. Համազասպ Սափարեան, հանդիսին վերայ:

« 1897 սեպտեմբերի 26ին առաւոտ թէողոսիա քաղաքն հանդիսաւոր կերպարնք մը առաւ, զարդարուեցաւ գոյն գգոյն դրօշակներով, զորգերով, կանանչներով, ինչպէս նաեւ նաւահանգստի մէջ ամէն նաւ ու շոգենաւ: Անհաւատակի բազմութիւն մը՝ Այլվազովսկին պալատէն մինչեւ քաղաքիս դահլիճն, որ հիանալի կերպով զարդարուած էր, երկու կողմէն ժողովուած կը սպասէր ութունամեայ ծերունոյն յաղթանակաւ անցքը տեսնելու. իսկ հրաւիրեալքն 10էն մինչեւ 11 ժամը կը փութային մտնել քաղաքական դահլիճը: Ճիշդ 11 ժամուն երեւաւ Յովհաննէս աղա Այլվազովսկին՝ նահանգապետին և քաղաքագլխին հետ՝ դահլիճն յաղթական կամարին առջեւ, և մուաւ ներս: Դլրդեցաւ դահլիճն ի տես Այլվազովսկոյն. ծառահարութիւն մէկ կողմէն և զինուրական նուազածութիւն միւս կողմէն. ամէն սիրու կը խնդար և կը տրոփէր: Եւ ահա անցաւ տաղանդաւոր հայ ծովանկարիչն ժպիտ երեսով, յաջ և ի ձախ բարեւելով զամէնքը, և բազմեցաւ իրեն համար պատրաստուած տեղը, որոյ երկու կողմէն նստան քաղաքիս քաղաքական ժողովոյն բոլոր անդամներ. և իսկոյն քաղաքագլուխն Էլոնարդոյ Դուրանտէ ելաւ ու կարդաց կայսերական հեռագիրն առ Յովհաննէս աղա, որով կը չնորհաւորէր վաթնամեայ զելարուեստական գործունէութեան յորելեանը, պարգեւելով եւ վարձատրելով Աղեքսանդր Նեւսկի շքանշանով, զոր և կը կրէր արդէն իւր լայն կրծքի վերայ: Հազիւ թէ վերջացուց խօսքը, ծափահարութեան հետ միասին, կեցցէներու հետ իստ սկսաւ կայսերական երգը: Յետ որոյ դարձեալ քաղաքապետն ելաւ ու չնորհաւորէց թէողոսիոյ կողմանէ իւր վաթնամեայ գործունէութեան յիշատակը, գրուատելով զինքն ոչ միայն իւրեւ առաջին կարգի նկարիչ, այլ և իւրեւ բարերար թէողոսիոյ, որոյ պայծառութիւնն և յառաջադիմութիւնն ըստ ամենայնի արդինք է իւր անխոնչ աշխատասիրութեան ու ջանից, որոյ համար քաղաքն երախտագիտութեամբ որոշեց բանալ նախակրթական վարժատուն յանուն Այլվազովսկոյն, և թէ մշտնշենապէս պիտի սորուին երեք ալքատ տղայք ի կը թաքարանի, յանուն նորա: Բաց ասուի քաղաքի կողմանէ ընծայեց թափծու արծաթեայ գեղեցիկ ներկաու մի, ապա նախանգապետ Տաւրիոյ Գնդապետ Լազարեան չնորհաւորէց իւր և ամբողջ նախանգի կողմանէ: Յետոյ կարգաւ եկան ծերունոյն դիմացը չնորհաւորէր կայսերական գեղարուեստից ակադեմիոյ կողմանէ. ա. Սոկոլով. լուսաւորութեան նախարարութեան կողմանէ պ. Եզեանց, ծովային նախարարութեան կողմանէ փոխ ծովապետ պ. Օստելեցի, Պետերբուրգի նկարիչ կանանց ընկերութեան կողմանէ տիկինն կուրիար, հարաւային ոուս նկարիչ ըն-

կերութեան կողմանէ պ. Եկիզ, Եալթայի քաղաքական ժողովոյն կողմանէ գեներալ Վիտոմիր, Պետերբուրգի հայ հասարակութեան կողմանէ իշխան Բերութով. և ասոնք ամէնն ալ զեղեցիկ կազմուած թղթակալներու մէջ զրած ընծայեցին իրենց բարեմաղթութիւնքը: Ապա հետ գհենէ թէողոսիոյ ամէն ազգէ և ամէն դասակարգէ եկան երեսփոխանք ու չնորհաւորէցին: Թէողոսիոյ ամբողջ լուսաւորչական և կաթողիկէ Հայոց կողմանէ ընտրուած էին չորս հոգի, պ. Զերնիքեան, պ. Ալթուննեան, պ. Պապայեան և պ. Արութեան շատ գեղեցիկ էր՝ 200 ոուբլի արժանիօք, ամբողջ արծաթէ, ոոկէզօծ և հիանալի գրուագիալ, և կրնամ ըսել որ ամէն ընծաներէն նոխ էր: Միջի գրուածը ոուսերէն էր՝ հանդերձ հայերէն թարգմանութեամբ: Այս հանդէսը շարունակեց մինչեւ ժամը 1:

« Երեկոյեան ծ ժամուն սկսան գարձեալ հաւաքուիլ ի գահլիճն, յորում պատրաստուած էին 270 հոգոյ համար կերակրոյ զեղեցիկ զարդարուած սեղաններ, հրաւիրելոց և քաղաքիս մեծամեծաց համար՝ թէ արանց և թէ կանանց: Ճիշդ 6 ժամուն մտաւ Այլվազովսկին զափնեայ պսակ ի գլուխ, ի մէջ կեցցէներու և երաժշտութեան: Ակսան նախամատոյց աղանդերքն ոտքի վերայ, և թիչ յիտոյ բազմեցան իւրաքանչիւր իւր տեղն ի մէջ ծաղկանց, լուսաւորութեան և նուազածութեանց: Ցընթացս կոչնոց բաժնուեցան փրփրալից գինի, և նահանգապետն ոտքի կանգնած քամեց բաժանց վասն կենաց կայսեր, կայսերուեւոյ և ամբողջ կայսերական ընտանեաց. Կեցցէներ և երաժշտութեան ձայնը մինչեւ յերկինս բարձրացան: Եւ ապա ըստ կարգի խմուեցան բաժակներ նախարարաց և այլ մեծամեծաց կենաց: Երբ այդ ամէնը վերջացաւ, ապա ելաւ քաղաքագլուխն և սկսաւ զեղեցիկ կերպով նկարագրելու յիշել մի առ մի Այլվազովսկոյն տարած յաղթութիւնը թէ ի նկարչութեան, թէ ի բարերարութեան և թէ ի քաղաքական գործս, աւարտելով՝ թէ յիրաւի թէողոսիացիք կը կոչնոց զեղեց այժմ իւրենց Հայր: Հազիւ թէ վերջին խօսքն արտասանեց, կցուեցան կեցցէներ, և ամէնը միասին ոտք ելած քամեցին փրփրալից բաժակներ: Եւ ահա այս վայրկենիս բացուեցաւ բեմին վարագոյը և տեսնուեցաւ թէողոսիա քաղաքն ի մէջ փառաւոր զարդարուած կանաչներու, ծաղիկներու և գոյնզգոյն լուսերու, և մարմարեայ արձանն Այլվազովսկոյն, զոր կը պսակէր նկարչութեան մուսայն, և դիմացը շրոյ աղբեւր մի կը ցայտէր, աղբիւն Այլվազեան:

« Յետ քաղաքագլխին ելաւ Գաղղիոյ հիւապան և ասաց շատ իմաստալից ճառ մը, թէողոսիոյ քաղաքին վաթնուն տարի առաջ ունեցած վիճակը յիշելով և յընթացս այշագի տարիներու ինչ վիճակ ստացած լինելը չնորհիւ Այլվազովսկոյն: Ապա ես կարգացի նախ Զեր հեռագիրը, և ապա փոքր ուսանաւոր մի: Ինձմէ վերջը կրթարանի տեսուց շատ կոկիկ և համառօտ ճառ մի խօսեցաւ, և ապա ընթերցան Հայոց կաթողիկոսին, կայսերական ընտանեաց, նախարարաց, այլ մեծամեծաց և զանազան քաղաքներէն եկած հեռագիրներ, որոց թիւը կարծէմ 400էն աւելի էր: Հացկերոյթն աւարտեցաւ 9 ժամուն. երբ դուրս ելանք փառաւոր լուսաւորութիւն սկսաւ և հրախաղութիւն. յետոյ սկսան զալ պարահանդիսին հրաւիրեալիքն:

« Երկրորդ օրն Այլվազովսկին ճառ տուաւ վաթնուն հոգուոյ, իսկ երեկոյեան մեծ խնջոք տեղի ունեցաւ բոլոր քաղաքացւոց համար, յորում կային 500 հոգիէն աւելի: Եատ ախորժելի անցաւ հասարակութեան Վենետիկոյ բարեկենդանը, զոր տեղույս մեծամեծ օրիորդք և երիտասարդք ամէն ազգէ և ամէն տեսակ զեղեցիկ տարագներով զարդարուած ներկայացտցին, երգեցին ու պարեցին Վենետիկոյ:

« Երկրորդ օրն Այլվազովսկին ճառ տուաւ վաթնուն հոգուոյ, իսկ երեկոյեան մեծ խնջոք տեղի ունեցաւ բոլոր քաղաքացւոց համար, յորում կային 500 հոգիէն աւելի: Եատ ախորժելի անցաւ հասարակութեան Վենետիկոյ բարեկենդանը, զոր տեղույս մեծամեծ օրիորդք և երիտասարդք ամէն ազգէ և ամէն տեսակ զեղեցիկ տարագներով զարդարուած ներկայացտցին, երգեցին ու պարեցին Վենետիկոյ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0378875

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԳՈՐԾԵՐԵՆ

Ա.3Վ.0.ԶԵՍԻՆ ՅՈՎՀ. ծովանմկարիչ, — ֆր. 1,50:

ԵՐԳՈՒՄՆ ՀԻՆ ՀԱՅՈՅ մէջ, 1910, (Եջ 326), սակաւ, ֆր. 5:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ ԵԳԻՇԵԼԻ պատմութեան վրայ, 1896 (Եջ 228), ֆր. 3,25:

Հ.0.3 ԳՐՈՇՆԵՐԻ պատմութեան մէջ, 1919, (Եջ 102) գաղլ. ֆր. 3:

ՃՈՇԵՐ ԵՒ ԽՆՁՈՅՑՔ նին Հայաստանի մէջ, 1912, (Եջ 503), ֆր. 4,75:

Ս. ՊՈՏՈՐՈԳԻ ՕՐԵԲԻՆ, տեսակը եւ ժամեր, հայ եկեղեցւոյ մէջ, 1899 (Եջ 93), ֆր. 2:

ՔԵՐԹՈՒՄՆՔ նուշակաւոր դերասան Պետրոս Հ. Սլամեանի, եւ կին սագրութիւն, 1896, Եջ 225, ֆր. 4:

Հ.0.3 ԾԼԱԲ 1911 տարւոյ Ազգային Սիմբոլոսի գործոց մէջ: ֆր. 3:



ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ



ՏՊՈՐՄՆԻՍ (1910) 1919 ամի Գրացուցակին զիները կը փոփոխուին, ընդհանրապէս 50% յաւելումով. իսկ առկաւարիւ մնացած գիրքերը ունին նաև բացառիկ յաւելումն:

ԳԻՆԵԲՐԻ՝ ֆրանսական ֆրանքով նշանակուած են, բայց կ'ընդունինք նաև ամեն ազգի դրամներ (կամ չէր), ֆրանսականի համեմատութեամբ:

Յուցանին զիները նշանակուած են միայն թղթակազմի (brochure) համար. իսկ կազմերու գլուխն առանձին կը հաշուուին՝ կազմին տեսակին և գիրքերու մեծութեան համեմատ:

Ծրարի և ճանապարհի ծախքը միշտ ընդունողաց վրայ կը հաշուուի. Տպարանիս Վարչութիւնը պատասխանատու չէ ո՛ր և իցէ վեասի կառկորսուեան՝ յետ կարեւոր եղած ինամքով ուղարկելու գիրքերը:

Մեզի գիմողներէն կը խնդրուի Գրացուցակիս այլուրենի կարգաշր դրեւ գիրքերու անուններն և ՈՐՈՇ ԿԵՐՊՈՎ հշանակել իրենց հասցեն:

Բազմավէպի համար զիմել ուղղակի բազմավէպի խմբագրութեան. իսկ գիրքերու համար՝ հետեւեալ հասցէին.

Imprimerie Arménienne

St. Lazare

VENISE (Italie)